ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 8.10. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ն. Ավետիսյան՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

Ռեկտորատի նիստին մասնակցում էր նաև ռազմական ամբիոնի պարետ-պատասխանատու Երվանդ Աթոյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված մեր հայրենակիցներին ՇՊՀ հյուրատանը հյուրընկալելու, նրանց աջակցություն ցուցաբերելու կազմակերպչական հարցերի մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

2. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին (միջնորդագրերի հիման վրա)

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

3. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով սոցիալական աշխատանք մասնագիտության առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

4. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով հոգեբանության մասնագիտության առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

5. 2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցան սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

6. **2019-2020** ուստարվա նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուսերի ուսանողների փոխատեղումների հատկացման մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված մեր հայրենակիցներին ՇՊՀ հյուրատանը հյուրընկալելու, նրանց աջակցություն ցուցաբերելու կազմակերպչական հարցերի մասին

Ներկայացնող՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ Ն. Ավետիսյան

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված մեր հայրենակիցները՝ թվով 19 հոգի հյուրընկալվել են ՇՊՀ հյուրատանը: Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև, որ նրանց սննդի կազմակերպման հարցը լուծվել է FOOD TIME սննդի կետի միջոցով, օրական մեկ անգամյա տաք սնունդ ապահովելու համար համաձայնություն է ձեռք բերվել առաջիկա տասն օրերի ընթացքում մեկ սննդաբաժնի համար վճարել 950 դրամ:

Տիկին Ավետիսյանը ռեկտորատի անդամներին տեղեկացրեց նաև, որ պարոն Նիկողոսյանի և պարոն Քալաջյանի հետ քննարկումներից հետո, իր կողմից ԿԳՄՄՆ-ի հետ համաձայնություն է ձեռք բերվել մեր հայրենակիցների կացության և սննդի կազմակերպման ֆինանսական հարցերը լուծելու համար օգտագործվեն ՀՀ համահայկական հիմնադրամին փոխանցվելիք գումարի այն մասը, որը դեռևս չի բուհի կողմից չի փոխանցվել հիմնադրամին՝ 1մլն ՀՀ դրամ: Տեղեկացվեց նաև, որ ՇՊՀ ուսանողական խորհուրդը նույնպես մասնակցում է այս գործընթացին, արցախցի մեր հայրենակիցների կարիքների համար կազմված ցուցակները տրվել է նրանց: Տիկին Ավետիսյանը նշեց, որ օրվա գնումները կատարվելու են կարիքներից ելնելով և խանութից հաշիվ դուրս գրվելով, որպեսզի համալսարանի կողմից համապատասխան գումարները փոխանցվեն:

Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ սննդի կազմակերպման և այլ կազմակերպչական բնույթի գործառույթների իրականացման նպատակով առաջարկում է պատասխանատու նշանակել ռազմական ամբիոնի պարետ-պատասխանատու Երվանդ Աթոյանին և քանի որ սոցիալական աշխատողներն ու հոգեբանները հյուրատանը գտնվելու առաջին օրվանից աշխատում են արցախցիների հետ՝ սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուներ նշանակել սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանք»-ի ամբիոնի դասախոսներ Անդրանիկ Շահինյանին և Ամալյա Խաղունովային: Տիկին Ավետիսյանն առաջարկը դրեց քվեարկության:

Տիկին Ավետիսյանի կողմից տեղեկացվեց նաև, որ հյուրատուն է այցելել ՇՊՀ ավագ դպրոցի տնօրենի ՊԿ պարոն Չաուշյանը, արցախցի դպրոցահասակ երեխաների ուսումնական գործընթացը կազմակերպելու նպատակով: Հոգեբանների

խորհրդով մեկ շաբաթից հետո, հոգեբանական աշխատանքների կազմակերպումից հետո միայն կարելի է կազմակերպել նրանց ուսումնական գործընթացը:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև, որ համալսարանի աշխատակիցների կողմից շարունակվում են համահայկական հիմնադրամին ֆինանսական փոխանցումները և պարոն Քալաջյանի առաջարկությամբ Հայէկոնոմ բանկի հաշվեհամարին նստած գումարները համահայկական հիմնադրամին կփոխանցվեն յուրաքանչյուր շաբաթվա վերջում:

Քանի որ հյուրատունը գտնվում է ռազմական ամբիոնի հարևանությամբ, տիկին Ավետիսյանը խնդրեց ռազմական ամբիոնի պետին, ուսանողների կամ աշխատակիցների ուժերով կարգավորել տարածքի խաղահրապարակը՝ արցախցի երեխաների ժամանցը ճիշտ կազմակերպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված մեր հայրենակիցներին հյուրընկալել ՇՊՀ հյուրատանը (թվով 19 անձ¤:

2. Սննդի կազմակերպման և այլ կազմակերպչական բնույթի գործառույթների իրականացման նպատակով պատասխանատու նշանակել ռազմական ամբիոնի պարետ-պատասխանատու Երվանդ Աթոյանին:

3. Սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուներ նշանակել սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի §Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանք¦-ի ամբիոնի դասախոսներ Անդրանիկ Շահինյանին և Ամալյա Խաղունովային:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին (միջնորդագրերի հիման վրա)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 3-րդ կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի վայրերի

փոփոխությունները՝ պրակտիկայի վայրերից ղեկավարների կողմից ներկայացրած միջնորդագրերի և ուսանողների դիմումների հիման վրա:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով սոցիալական աշխատանք մասնագիտության առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով սոցիալական աշխատանք մասնագիտության առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխությունը, այն անցկացնել ՇՊՀ հյուրատանը՝ ս/թ-ի հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 23-ը ընկած ժամանակահատվածում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով հոգեբանության մասնագիտության առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով հոգեբանության մասնագիտության առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխությունը, այն անցկացնել ՇՊՀ հյուրատանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցան սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2020-2021 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկայի վայրերի փոփոխությունը, այն անցկացնել ՇՊՀ հյուրատանը՝ ս/թ-ի հոկտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում (շաբաթական երկու օր հաճախականությամբ):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. 2019-2020 ուստարվա նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուսերի ուսանողների փոխատեղումների հատկացման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուսերի ուսանողների փոխատեղումների հատկացումը կատարել պրակտիկայի արդյունքների ամփոփումից ու «Մարտավարություն» և «Կրակային պատրաստություն» առարկաների քննությունների իրականացումից հետո:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորի ԺՊ՝	Ե. Սերոբյան
Ռեկտորի ԺՊ-ի ՊԿ՝	Ն. Ավետիսյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ — Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ — Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ — Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ — Ա. Սկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝ — Ա. Հովհաննիսյան